Ընթրիքը վերջացաւ, երբ տկճորից գինին սպառուեցաւ: Խարոյկի վրայ աւելացրին փայտ եւ կրկին մինարեթի մթին կամարները սկսեցին փայլել ծիրանի լուսով:

Այդ միջոցին նրանք սկսեցին խօսել ինձ բոլորովին անհասկանալի մի լեզուով: Խօսակցութիւնը, որ սկզբում մեղմ էր, հետզհետէ սաստկանալով, հասաւ տաք վիճաբանութեան: Ասլանը նոյնպէս սառն եւ հանդարտ կերպով վիճում էր, որպէս ընթրիքի ժամանակ խմում էր: Սագօն չէր դադարում անընդհատ շատա-խօսելուց. նրա կատոի դէմքը բարկութիւնից բոլորովին լրջացել եւ ճակնդեղի գոյն էր ստացել: Կարօն հանդարտ էր, որպէս միշտ. բայց նրա ճակատի երակները հաստացել եւ դէմքը աւելի խոշոր գծագրութիւն էր ստացել, ոչ այնքան շատ խմելուց, որքան ներքին վրդովմունքից: Երկու երիտասարդները, կարծես, չէին խօսում, այլ արձակում էին մի տեսակ վայրենի հնչիւններ, որ աւելի նման էին գազանների մռնչիւնին: Ես սարսափում էի եւ միշտ սպասում էի, թէ ահա վեր կը կենան եւ միմեանց կը կոտորէն:

Ես ոչինչ հասկանալ չկարողացայ, թէ ի՞նչ առարկայի վրայ էր վիճաբանութիւնը, միայն նկատեցի, որ Կարօյի հեղինակութիւնը յաղթեց բոլորին: Այժմ խօսակցութիւնը սկսեց մեղմանալ եւ կրկին բոլորը հանգստացան: Ճշմարիտ ասած, այդ աղմկալի տեսարանը, այդ տաք, կրակոտ վիճմունքները ոչինչ բաւականութիւն չպատճառեցին իմ մէջ, եւ ես երկար նրանց լսել չկարողացայ: Մի տեսակ տխուր ձանձրոյթ տիրեց իմ սրտին, անսովոր խմելուց գլուխս սկսեց պտոյտոիլ, եւ շուտով իմ աչքերը ծանրացան քնով...

Թ. ԿԱՐՕՅԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Այստեղ ես ստիպուած եմ մի փոքր կանգ առնել, թողնել ընկերներիս խորհրդաւոր մինարեթի մէջ եւ դառնալ դէպի Կարօն: Այդ անձնաւորութիւնը, որ գլխաւոր դերերից մէկը պիտի խաղայ իմ պատմութեան մէջ, արժանի է առանձին ուշադրութեան:

Կարօյի իսկական անունը ես չգիտեմ, գուցէ նա ինքն էլ չգիտէր, միայն յայտնի էր, որ դա մի մականուն է նրա ծագումը եւ ազգատոհմը թաքցնելու համար: Նա մեր քաղաքի բնիկներից չէր, որտեղացի՞ էր, — ոչ ոք չգիտէր, միայն ասում էին, մի անգամ յայտնուեցաւ մեր քաղաքում մի անծանօթ կին եւ բերեց իր հետ փոքրիկ Կարօյին, որին կոչում էր իրա թոռը: Զումրուդը-այսպէս էր կնոջ անունը — հմուտ էր ժողովրդական բժշկութեան, այդ ար-